

## ՁՄԵՌ

*Հեռացաւ աշուն: Եկաւ ցուրտ ձմեռ.*
*Սպիտակ սաւանով ծածկեցաւ գետին.*
*Փչեցին ցասկոտ ու ցուրտ քամիները՝,*
*Եւ նուազեցաւ տաք ոյժն արեւին:*

*Մերկ եւ անպաշտպան կանգնած են ծառեր.*
*Եւ անսանձ հովին ալ կատաղութիւն*
*Տատանեցնելով նաեւ անտառներ՝*
*Թափում է նոցա վերայից պաղ ձիւն:*

*Վաղուց հեռացան թռչուններ պանդուխտ*
*Դէպ ի տաք հարաւ, եւ նոցա փոխան*
*Թռչում է օդումն ագռաւների գունդ*
*Հնչեցընելով իւրեանց տըխուր ձայն:*

*Սառեցան գետեր, եւ աղբիւրների*
*Քաղցրաձայն կարկաչն մեզ համար լըռեց.*
*Եւ որպէս անզօր ու տըկար գերի*
*Անգութ սառուցի շըղթաներ կըրեց:*

*Բայց չէ մշտական այս դաժան ձմեռ,*
*Շուտով կը դառնայ գարուն շքեղաշուք.*
*Կը ծաղկի բնութիւն, կ'երգեն թռչուններ*
*Եւ պարտէզ կ'ելնէ խաղասէր մանուկ:*

*ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ*



digitised by A.R.A.R.@